

դրկեց իր անխնայ հարսին խոխո հաղցրեց, մարդագէլ չինեց : Հա՛, ձեզ դուրբա՛ն , բացականչում են պատանները , մինչև մարդագէլ դառած հարսի սկէտուրն իր հարսի խոխնէն չը գտնի, կրակը չը քցի , չայրի, մարդագէլն աշխարհից չի կտրուել : Մարդագէլ հարսը գիշերը մարդի հետ տեղաշարժէ մտնում, սուտ կատուաքուռ է տալիս ու հէնց որ տեսնում է, թէ իր տղամարդը խոր քուն մտաւ , ինքը կամաց դուրս է սլքում տեղից , խոխնէն հագնում է , մինչև լուսադէմ մարդագիրու թիւն անում , առաւօտագէտ մութը մութը՝ խոխնէն հանում . մի թափում տեղ պահում է ու մտնում մարդի կողքը, տաղանում : սաքի թէ՛ ողջ գիշերը ծոցումդ խռովալիս եմ եղել :

Մարդագիրին ոչ ով աչքով չի տեսնիլ, պատմում են պատանները, բայց ասում են, թէ մէկի աչքին տկան թօթափել շուաքի պէս ուղտի չափ է երեւում , մէկէլի աչքին՝ կովի չափ , մէկին՝ մեծ շան չափ, միւսին՝ հաւի չափ, Թէկուզ մկան չափ էլ լինի, դատողութիւն են տալիս տատերը, բայց քաւթառ քօտին աշխարհիս բալոր դազաններէից ուժեղ է ու զալում . մօր ձեռից երեխին է խլում, հօր ձեռից հասած , կատարած թղային : Մարդագիրի համար մէկ է, ճանդն ընկնողին տտամների տակը կառնի ու հաւի ճուռի պէս կը տանի : Բայց անխնայն ատամներին չի ուզում շատ զօռ տալ , երեխէքանց ոսկրներն աւելի փութը են, երեխէք շատ է սիրում լափել :

Անհիմն չեն պատանների պատմութեանքները բորենու մեծութեան վերաբերմամբ , երկիւղի սաստկութիւնից՝ ամէն պատահած կենդանի, նայն իսկ ծառ ու քար բորենի է թւում չփոթուած եւ նախապաշարմունքից լրջմտութիւնը կորցրած մարդին :

Վերոգրեալ աւանդութիւններին իբրեւ ապացոյց՝ թող համարուի առաջիկայ արկածը :

ԳԵՐՃ ԳՌՕՇԵԱՆՑ

(Շարունակելի)



## ԳԻՏԱԿԱՆ ՏՕՆ ՄԸ

ի պատիւ Տր. Շարֆի եւ իր արշաւախմբին

Հերոսներ, կան, համեմատաբար շատ սակաւաթիւ՝ որոնք ընդհանուր մարդկութեան հիւսցման, համակրանքին եւ քաջալերութեան արժանի են, քան թէ այն բաղամթիւ Սրէսի ասպետները , որոնց ճակատը շափառու կարմիր լուսապսակով մը միայն կը փայլի :

Մարդկութիւնը ապագային այս վերջինները իրաւամբ արհամարհող մտայութեան մը յանձնելէ յետոյ, յաւիտենական յուշարձաններ պիտի բարձրացնէ առաջիններուն, որոնք վեհ, իսկական եւ անշահախնդիր քաջութիւնը ունեցած են գիտական հողի մը վրայ կանգնած, կուիլ բնութեան հետ, կորզել անկէ իր այնքան յամառաբար պահած գաղափարները, լոյս—աշխարհ հանել անոնք, եւ յաճախ դժբաղդաբար առանց Ծաղատակին հասնելու ինչպէս այդ այլապէս փառաւոր կուի դայտին վրայ։ Ուրկէ փոխանակ մահւան թանձրացող սուերներուն անձանօթ ու նոր հարկոններու գրաւիչ արշաւոյսը կը բացալուտի։

Փետրվարի 13-25 ի երեկոն գիտական տօն էր, *Matin*-ի խմբագրութեան կողմէն միմիայն իր բնութեցողներուն համար կազմակերպուած եւ նւիրուած, ի պատիւ գիտութեան այդ անվեհեր մարտիկներէն ֆրանսացի բեւեռային խուզարկու Տօք. Շառքօի, որ այս պահուստ իր արշաւախմբին հետ դեռ կը գտնուի հարաւային բեւեռի արհաւիրալիք ու յաւիտենական սառնամանիքներուն մէջ։

Իր *Français* շնորհաւոր վրայ, մեկնումէն յետոյ, սպասուած յուրերը մինչեւ ցարդ չեն հասած, հասկանալի անձկութեան մը մատնելով *Matin*-ի խմբագրութիւնը՝ որ այդ արշաւանքը կազմակերպած էր՝ եւ այն բոլոր անհատները, որոնք սերտօրէն կը հետաքրքրուէին այդ շուրհկան ձեռնարկութեամբ։

*Matin*-ի խմբագրութիւնը ուղեւորով հասարակութեան սրտերը հանգստացնել ու նոր յոյս մը ներշնչել անոնց, օղակած էր անդիսով Սեպտեմբերին հարաւային բեւեռում ըրած իր երկրորդ արշաւանդին վերադարձող Պ. Լուի Պէռնաքքիի բարի տրամադրութիւնէն եւ փորձառութիւններէն, հրաւիրելով վայն բանախօսելու իր բեւեռային խուզարկութիւններուն եւ Տօք. Շառքօի արշաւանդի յաջողութեան համար ունեցած յոյսերու մասին։

Թոքատէոսի պալատին հանդէսներու մեծ սրահը հինգ հազար հոգիի չափ փայլուն հասարակութիւն մը գրաւած էր ամբողջապէս սրունց մէջ նախարարներ, նախարարութիւններու ներկայացուցիչներ եւ գիտնականներ կընդնշմարուէին։

Կանանչ տունկերով ու եռագոյն դրօշակներով զարդարւած բեմին մէկ կողմը հետեւակներու 104րդ զօրագունդի երաժշտախումբը մինչեւ բանախօսի յայտնուիլը զանազան գեղեցիկ կտորներով հասարակութիւնը գրադեցուց, հետեւելիք գիտական բանախօսութեան գեղարուեստական նախաբան մը տալով։

Ժամը 9-ին՝ անդլիական ազգային երգի մեղամաղձոտ շնչերով, որուն անմիջապէս յաջորդեց «Մարտէյէզ»ը, եւ որուն հասարակութիւնը լսեց յոտնկայս, Պ. Շ. Պէռնաքքի իւր մուտքն ըրաւ բեմի ճակատի դռնէն, իր քով ունենալով նախկին նախարար ու Վօշինշինի պատգա-

մաւոր Պ. Ծոռնսուա Տըլօնքը, որ հասարակութեան ոգեւորւած ծափահարութիւններու վերջանալէն յետոյ, քանի մը յստակ ու կարճ նախադասութիւններով հերկայացուց բանախօսը ունկնդիրներուն, փոխադարձաբար անոնց կողմէ եղած ոգեւորւած ընդունելութեան համար բանախօսին շնորհակալութիւնը յայտնելով :

Ընդհանուր խորհրդաւոր լուծութեան մը մէջ Պ. Պէռնաքքի կանգնեցաւ ու անգլիական շնչուած արտասանութեամբ ֆրանսերէնով մը սկսաւ. կարգաւ իր վերջին արշաւանքին եւ խուզարկութիւններուն նկարագրութիւնք :

Պ. Պէռնաքքի բանախօսութեան ամենահետաքրքրական մասը կը կազմէր մոդական լապսերով ցոյց տրւած հարաւային բեւեռի տեսարաններու լուսանկարները եւ իւր մասնակցած վերջին արշաւանքի զանազան միջադէպերը, որոնք իր պատմութեան հետ միանալով անջնջելի եւ խոր տպաւորութիւն մը ձգեցին հասարակութեան վրայ, տանելով զայն յաւերժական սառցակոյտերու լուռ թագաւորութեան մէջ, եւ զգացնելով անոր այդ օրինակ ձնհալիկութեան մը բովանդակ դժնդհակութիւնները եւ գիտութեան նաւայելու նպատակին համար անոնց դէմ մայրաւորողներու նկարագրին տոկունութիւնը եւ վեհութիւնը :

Երկու երեք փառան կարճ միջոցի մը մէջ Պ. Պէռնաքքի մեզ պարեցուց սառցակոյտերու ցնդական աշխարհին մէջ, ուր բանախօսը՝ հազիւ երեսուն տարեկան՝ իր մասնակցած երկու արշաւանքներու ժամանակ չորս տարի տասը ամիս շարունակ ապրած էր. կրելով անպատմելի զրկանքներ, Վէրսէ 55 աստիճան վար ցուրտի մը նեղութիւնները՝ որ ամառը հազիւ միշեւ 0-ի կ'ը բաժնաւոր՝ եւ սովամահ ըլլալու վտանգը, ուրկէ անկայն անդրական կ'առաջարկէին կողմէն զրկւած երկու որոնող նաւերը ժամանակին կը հասնէին լինքը եւ ընկերները փրկելու եւ ողջ առողջ Սւրոպա բերելու համար :

Պ. Պէռնաքքի այդ արշաւանքը գիտական տեսակէտով մեծ նշանակալիութիւններ էր ունեցած՝ կրօնականաբար ամեն բարձր սարահարթի մը նոր գիւտով, մասնական զօրութիւններու աւելի խնամոտ հետազոտութիւն թող, եւ կենդանական աշխարհին ներկայացուցած առանձնաշատութիւններու եւ տարբերութիւններու ուսումնասիրութեամբ :

Պ. Պէռնաքքի յոյս յայտնեց Տօք. Նաթքօի եւ իր արշաւախմբին դեռ կենդանի ըլլալուն՝ բացատրելով թէ, իրենց խուզարկութիւններուն ժամանակ շատ անգամներ չեն կրցած բնութեան յարուցած անակնկալներուն պատճառաւ, իրենց մտայրած նշանները որոշած տեղերը ձգել, կամ նախապէս որոշած տեղ մը ձմեռել :

Երեկոյթի նախապահը՝ Ծ. Տըլօնքը բանախօսին ուղղւած երկարատեւ ծափահարութիւններէն յետոյ կրկին շնորհակալութիւն յայտնեց համարելի եւ արժանաւոր գիտականին, եւ յոյս յայտնեց թէ ֆրանսական

ապօքը անշուշտ իր արժանաւոր դաւակները չպիտի լքէ իրենց դժւարին ձեռնարկութեան սարսափելի վտանգներուն մէջ, եւ խրոխտ շեշտերով յայտնեց թէ բարեզեան մամուլը *Main*-ը առաջնորդ ունենալով՝ ձայն պիտի բարձրացնէ ստիպելով կառավարութեան, անգլիական կառավարութեան նման, խուզարկու օգնական նաւեր դրկել անվեհեր երկրախոյզին որոնելու, եթէ՝ ինչպէս յուսադրեց Պ. Պէննաքքի՝ միշտ յառաջիկայ Ապրիլ ոչ մի լուր չնանի *Տօք Շառքօ* արշաւախմբէն։

Երիտասարդ խուզարկուն՝ յուզուած՝ իր վերջին շնորհակալութեան խօսքերը հզրափակեց մաղթելով, որ մարդիկ այսուհետեւ պատահին իրար դիտական կուտադաշտի մը վրայ, յօդուտ մարդկութեան վարկացման, քաղաքակրթութեան եւ յառաջդիմութեան։

Այդ ազնիւ ու վեհ բառերը ծափահարութիւններու փոթորիկ մը յարուցին հսկայ սրահի կամարներուն տակ, ապացուցանելով թէ այդտեղ հաւաքուած հինգ հազար հոգիները միեւնոյն գաղափարի ջեփմեանք եւ համոզուած երկրպագուներն էին։

Մտփահարութիւններու գաղարեւելն յետոյ Պ. Ֆ. Տըլօնքը յայտարարեց թէ *Main*-ի խմբագրութիւնը հանդիսականներուն իբր *surprise* պիտի ներկայացնէ իր անցեալ տարի կազմած « քանակի գնացքօին զանազան տեսարանները, շարժուն պատկերներով, (սինէմաթօկ րաֆ) որոնք սրահին ընդհանուր մթութեան մէջ, բնմի հսկայ երգեհոնին Պ. Տէքքի վարժ մատներուն տակ մերթ գոռ ու մերթ նուրբ ներդաշնակութիւններուն ընկերակցութեամբ, սկսան տողանցել սպիտակ կտաւին վրայէն, նորէն կենդանացնելով հսկայական ձեռնարկութիւն մը, որ իր ժամանակին մեծ աղմուկ հանեց։

Ջինսորական երաժշտութեան վերջին մէկ կտորին զւարթ շեշտերուն տակ հասարակութիւնը սկսաւ ցրել, խտնազաղարդ երկնքի մը տակ լեցնելով թրօքատէօի հրապարակը եւ ծառուղիները, ու տանելով անշուշտ իր սրտին մէջ նոր գորովի եւ հիացումի մը տարրերը, անոնց նկատմամբ, որոնք հեռուէն՝ յաւիտենական լուծեան ու մեռելութեան աշխարհին մէջ գուցէ կոգեւարելին այդ պահուն...

ՀՐ. ԱԼԵԱՆԱՔ

15—28 Փետ. Բարեգ .

Յ. Գ. — Մարտի 5-ին Փուէրթօ-Մատրինէն *Տօք Շառքօ* *Main*-ի խմբագրութեան ուղարկած մէկ կարճ հեռագիրը ուբախտութեամբ համակեց գիտական աշխարհին պատկանող եւ անվեհեր երկրախոյզին շահեկան ու միանգամայն վտանգաւոր ձեռնարկութեան համակրող անձնաւորութիւններու սրտերը, փարատելով այն կասկածը, որ ունէին

անոր մահւան մասին , կորո՛ւստ մը , որ անշուշտ ծանր պիտի ըլլար  
գիտութեան համար :

Անտարակոյս շուտով Տօք. Շառքօի բերնէն լսելու բաղղջ պիտի ու-  
նենանք իր վտանգալից եւ յաւիչ առշաւանքի պատմութիւնը եւ ար-  
դիւնքները . որոնց իր ժամանակին ուրախութեամբ պիտի հաղորդենք  
սթանասէր յի ընթերցողներուն :

Հ. Ա.



### ՄԵՆԴԱՎԱԹՐԻՍ ԹԻՇԱՏԱԿԻՆ

Կ ապայա ալիքներ , վշող ալիքներ ,  
Երազ-իղձերու փրփուր-ժաղիկներ,  
Ո՛հ, ես ձեր անքնի կարօտ մնացի՝  
կոհերուս մէջ ձեզ զուր որոնեցի . . .

Դուք շշնշալով իմ վառ ցնորքին,  
Թիշեցնէիք անցեալ մը անդին :  
Մինչ վասփորի վեհ , չքնաղ ափունքին .  
Կը ձայնակցէի ձեր մեղմ օրրերդին :

Երբ թաւեալ ալիքդ՝ մեռաց փրփուրով  
Մեզմէի պարէիք միմեանց փարելով .  
Ու սուքերուս առի փրփուր-ժանեակներ ,  
Փութով սփռէիք զերթ քնքուշ նուէր :

Օ՛հ, ձեզ կորուսի , հեռացաք յաւէտ .  
Այժմ իմ առջեւ անգութ նեղածէտ ,  
Մութ ովկիանն է կանգնած յաղթական,  
Անցեալ յուշերու զերթ հսկայ պատան . . .

Օր. Զ. ԱԼԵԱՆԱՔ

Բարիկ,

